



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ՅԱՅ ԿՆՈՉ ՏԱՐՈՒԱՆ ԵՇՐԱՓԱԿԻՉ ՔԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ՊԱՅՉՈՒ

ԱՍՏՈՒԹԱՄԱՅՐԸ ԵՂԱԾ Է ՈՒ ԿԸ ՄՆԱՅ ՀԱՅ ՄՈՐ ԿԵՆՅԱՆԻ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՏԻՊԱՐ ՈՒՂԵՑՈՅՑԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐԱՎԱՎԱԾ

Յայ Կնոջ եւ անոր պատմական ու այժմեական առաքելութեան արժեւորման իմաստով, յատկանշական ձեռնարկ մը տեղի ունեցաւ Երեքաբթի, 16 Նոյեմբերի երեկոյեան, Կլենտելի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ յարկին տակ, հովանաւորութեամբ ու Ներկայութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի ու մասնակցութեամբ հայկական միութեանց Ներկայացուցիչներու եւ մեծ թիւով հանդիսականներու:

Յանդիսութիւնը կազմակերպուած էր Ազգային Առաջնորդարանի Առաքելութեան Տարածման յանձնախումբին կողմէ, ընդառաջելով Ա.Ս.Օ.Ս.Ս. Արամ Ա. Կաթողիկոսի պատգամին, որ 2010 տարին կը նուիրէր Յայ Կնոջ: Ներկայ էին մեր Թեմիս հոգեւորականաց դասու անդամներ, Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիքիճեան, Ազգ. Վարչութեան անդամներ, ծխական շրջաններու Ներկայացուցիչներ, միութեանց Ներկայացուցիչներ եւ բազմահարիւր ազգայիններ:

Յայտագիրը կազմուած էր երկու գլխաւոր բաժիններէ. բանախօսութիւն եւ միութեանց Ներկայացուցիչներու խօսքերը, ինչպէս նաեւ գեղարուեստական արտայայտութիւններ:

Յանդիսութիւնը սկսաւ ժամը 7:30ը թիչ անց, Առաջնորդ Մրազանին ու հոգեւորականաց դասու Եկեղեցի մուտքով: Կազմակերպիչ յանձնախումբը ազնիւ գաղափարը ունեցած էր հանդիսական տիկիններուն եւ օրիորդներուն նուիրել մեկական մեխակ: Ազգ. Առաջնորդարանի «Լուսաւորիչ» երիտասարդական երգչախումբը առաջնորդեց Տերունական Ալօթքի երգեցողութիւնը: Ապա, հանդիսավարը՝ Տիկին Թամար Սերայտարեան կատարեց բացման խօսքը եւ հակիրճ կերպով անդրադարձաւ հանդիսութեան շարժառիթին: Ան վեր առաւ հայ կնոջ առանձնայատկութիւններն ու դերակատարութիւնը՝ մեր պատմութեան մէջ ու բոլոր ժամանակներուն, հայ կեանքի տարբեր բնագաւառներուն մէջ, ինչ որ անոր հանդեա ստեղծած է յարգանք ու երախտագիտական

Վերաբերմունք: Հանդիսավարը յատուկ կարեւորութեամբ կանգ առաւ հայ իգական սեռի պարտաւորութեանց ու դերին, 21րդ դարու Ներկայ պայմաններուն մէջ, երբ ուսումը համատարած է ու զարգացման առիթները՝ հասանելի: Ան համոզում յայտնեց, որ այժմու պայմաններուն մէջ, հայ կինը նոյնքան ու աւելի յանձնառու պիտի մնայ իր առաքելութեան ու զայն պիտի կենսագործէ մեր հասարակական կեանքին, մշակոյթին, սեփական ընտանիքներու թէ միութենական ու հայրենական անդաստաններու մէջ:

ՄԻՈՒԹԵԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԽՕՍՔԵՐ

Այսուհետեւ, հանդիսավարը յաջորդաբար բեմ հրաւիրեց ՀՕՄի, Համագայինի եւ Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինի Ներկայացուցիչները, որպեսզի հակիրճ արտայայտութիւններով անդրադառնան Հայ Կոնջ պատմական ու այժմեական դերին, յանձնառութիւններուն:

ՀՕՄի անունով խօսք առաւ Տիկին Սօնա Մատարեան. ան իր կողքին ուներ Ազգ. Ռոգ Եւ Ալեք Փիլիպոս Վարժարանի աշակերտներէն խումբ մը, նկատի ունենալով որ իր խօսքը պետք էր «պատուաստուէր» օրուան խորհուրդին համապատասխանող բանաստեղծական կտորներով: Տիկին Մատարեան, որ նաեւ դաստիարակ է, մասնաւորաբար վեր առաւ մեր նորագոյն պատմութեան հայ կոնջ գործոն մասնակիցի հանգամանքը, սկսելով մեր ազատագրական պայքարէն մինչեւ անցեալ դարու սկիզբին մարմին առած ՀՕՄի աշխատանքի դաշտերը: Ան անդրադարձաւ տասնամեակներու ընթացքին ՀՕՄի ուռնացման ու աշխատանքի դաշտերուն տարածման, նշելով, որ այսօր, հայկական կոնչական այս մեծ միութիւնը կը գործէ 26 երկիրներու մէջ, ունի աւելի քան 15,000 անդամ, որոնք լծուած են մեր ժողովուրդին ու հայրենիքին անսակարկ ծառայութեան: Ան շեշտեց, որ իր հիմնադրութենէն ուղիղ 100 տարի ետք, ՀՕՄը կ'ապրի իր ուխտի ու առաքելութեան վերահաստատման հանգրուանը ու իր գործն ու գոյութիւնը պիտի շարունակէ, այնքան ատեն որ կ'ապրի Հայ ժողովուրդը:

Համագայինի անունով խօսք առաւ Տիկին Ծովինար Մելքոնեան: Ան նշեց, որ այս տարուան ընթացքին Հայ Կոնջ նուիրուած հանդիսութիւնները, որոնց շարքին՝ այս մէկը, կազմակերպուած են ընդառաջելով Վեհափառ Հայրապետի պատգամին, ու յիշեցուց, որ Հայ Կինը մեծարելու նախաձեռնութիւնը անսախընթաց չէ, որովհետեւ 1968ին, Երանաշնորհ S. S. Խորեն Ա. Կաթողիկոսը շատ կանուխէն գնահատելով հայ կոնջ դերակատարութիւնը, յատուկ պատիւի արժանացուցած էր Ռուբինա Օհանջանեանը, Համագային հիմնադրութեան ու առաջին տասնամեակներու գործին անոր անձնիր մասնակցութեան համար: Տիկին Մելքոնեան վեր առաւ հայ կոնջ դերը՝ հայկական մշակոյթի աստեղծման ու պահպանման գործին մէջ, յիշեցնելով, որ Յեղասպանութեան օրերուն, հայ մայրը Եփրատի աւազներուն վրայ իր զաւկին սորվեցուց մեր Այբուրենը, որպեսզի մեր ժողովուրդին ու մշակոյթին գոյատեւումը երաշխաւորուի, ու վերջապէս, շեշտը դրաւ այն իրականութեան վրայ, որ մեր ազգի գոյատեւման մէջ հայ կինը ունի առանցքային դեր ու պատրաստ է

դիմագրաւելու նոր ժամանակներուն բերած մարտահրաւերները, ձեռք ձեռքի տալով հայ կեանքի բոլոր կերտիչներուն հետ:

Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմին ատենապետութիւն Տիկին Մարիամ Կարապետեան իր խօսքը սկսաւ ողջունելով Ներկաները եւ գոհունակութիւն արտայայտեց, որ Տիկնանց Օժանդակ Մարմինը մասնակից է այս պատմական հանդիսութեան: Ան նկատել տուաւ, որ Տ.Օ.Մարմինը տարուան ընթացքին մեկն աւելի ձեռնարկներով ընդառաջեց Վեհափառ Հայրապետի պատգամին, որ ուղեցոյց է ոչ միայն այս տարուան ձեռնարկներուն, այլ նաեւ հայ կնոջ բազմապիսի դերակատարութեանց կենսագործման, հայ կեանքի բոլոր բնագաւառներուն մեչ: Տիկին Կարապետեան յիշեցուց, որ հայ կինը մեր հասարակական կեանքին մեջ իր պատուաւոր տեղը ունեցած է մեր պատմութեան բոլոր ժամանակաշրջաններուն, սկսելով նախաքրիստոնեական շրջանեն մինչեւ օրս, նշելով, որ Վեհափառին պատգամը մեկ կողմէ խթան հանդիսացաւ հայ կնոջ դերակատարութեան արժեւորման ու յարգանքի արտայայտութեանց, սակայն նաեւ նոյնինքն հայ կինը առիթ ունեցաւ անդրադառնալու իր դերին եւ ինընագնահատում կատարելու մեր անհատական թէ հաւաքական կեանքին մեջ, հետեւաբար նաեւ՝ Վերանորոգելու իր յանձնառութիւնը՝ անսահանջ կերպով շարունակելու իր առաքելութիւնը:

ԳԼԽԱՒՐ ԲԱՆԱԽՈՍԸ

Հանդիսավարը ապա բեմ հրաւիրեց օրուան գլխաւոր բանախօսը՝ Տիկին Ռիմա Պողոսեանը: Ան հակիրճ կերպով անդրադարձաւ բանախօսին վաստակին՝ հայկական Պարսկաստանեն մինչեւ մեր գաղութը, նշելով, որ ան ծառայած է հայ դպրոցին, մեր Եկեղեցւոյ, ՅՈՒԻն, իսկ Ազգ. Երեսփոխանական Վերջին ժողովին, ընտրուած է Ազգ. Վարչութեան անդամ. հետաքրքրական զուգարիպութեամբ մը, ան Հայ կնոջ Տարուան ընթացքին ընտրուած է Ազգ. Վարչութեան առաջին իքական սեռի պատկանող ատենապետը:

Տիկին Պողոսեան նախ եւ առաջ ողջունեց Ներկաներն ու շնորհակալութեան խօսք ուղղեց կազմակերպիչ յանձնախումբին, իրեն ընծայուած այս առիթին համար: Ան հիմնականին մեջ վեր առաւ հայ կնոջ դերը՝ իրեւ մայր եւ հասարակական գործիչ: Ան նշեց, որ այս դերակատարութիւնը ունի հազարամեակներու պատմութիւն, սկսելով հեթանոսական դարերէն մինչեւ քրիստոնեութեան որդեգրում ու մեր օրերը: Այս դերակատարութեան մասնակից են եղած թագուհիներ, իշխանուհիներ, ընտանիքի մայրեր ու դաստիարակներ, ապա նաեւ մեր ազգային պայքարին մասնակցիներ, եւ այդ իսկ պատճառով, հայ կնոջ հանդեպ զարգացած է սէր ու յարգանք: Ան շեշտեց, որ ինչպէս անցեալին, նոյնպէս ալ այսօր, մեր հաւաքական կեանքին հիմք կը կազմէ ընտանիքը, որուն մեջ բանալի դեր ունի կինը՝ իր ամուսնոյն կողքին: Ան գնահատումը կատարեց հայ կնոջ նուիրումին՝ հանդեպ իր զաւակներուն ու ժողովուրդին, իրեւ լծակից՝ հողը պաշտպանող այրերուն: Ան յիշատակեց մեր պատմութեան կերտումին մեջ դերակատար եղող նշանաւոր կիներ, սկսելով

քրիստոնեութեան առաջին շրջանեն մինչեւ հայ ազատագրական պայքարի օրերը, աւելցնելով, որ նոր դարերը նոր չափանիշներ հաստատած են հայ կնոջ առաքելութեան կենսագործման համար, հայրենակորոյս մեր սերունդներուն փոխանցելու հայրենի աւանդներն ու արժեքները: Տիկին Պօղոսեան յատուկ յիշատակութեան արժանացուց մեր գրականութեան, մշակոյթի տարբեր բնագաւառներուն կերտումին մեջ բաժին ունեցած բանաստեղծներ, արուեստագետներ ու հասարակական կեանքի նուիրեալներ, ապա նաեւ ՅՕՍԻ նման կազմակերպութիւն մը, որ կերտած է մեկ դարու վաստակ:

Իր խօսքի վերջին բաժինով, բանախօսը կարեւորութեամբ վեր առաւ հայ մօր պարտականութիւնն ու իրայատուկ առաքելութիւնը՝ հայ ընտանիքի արժեքներուն պահպանման ու հայրենիքի ծառայութեան մեջ, ընդգծելով, որ բարոյական արժեքներու նահանջի պատկերին մեջ, այս դերը յատուկ կարեւորութիւն կը ստանայ եւ անփոխարինելի է նոր սերունդներու դաստիարակութեան գործին մեջ:

Գեղարուեստական յայտագիրը ուներ քանի մը բաժին. ինչպես նշեցինք, Ազգ. Ռ. Եւ Ա. Փիլիպոս վարժարանի աշակերտներ բանաստեղծութիւններու արտասանութեամբ բերին գեղեցիկ մասնակցութիւն: Երգչուիի Ելեն Աւանեսեան հմայիչ ծայնով հրամցուց երկու երգ՝ «Իմ Մայրիկ» եւ «Յայոց Կանայք», որոնք կը ներդաշնակուեին օրուան խորհուրդին հետ: Ազգ. Առաջնորդարանի «Լուսաւորիչ» երիտասարդական երգչախումբը, ղեկավարութեամբ Յոզգ. Տ. Պարթեւ Վորդ. Կիւլիւմեանի, հրամցուց երեք երգ՝ «Խնկի Ծառի Նման Ես», «Օրօր» (Մենակատար Քնարիկ Ներկարարեան) եւ «Մօր Սիրտը»: Երգեհոնի եւ դաշնակի վրայ կ'ընկերանար Արմինէ Տերտերեան, իսկ ջութակով՝ Արմինէ Ներկարարեան եւ Շաքել Զապունեան:

ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐԲԱՉԱՆԻՆ ԽՕՍՔԸ

Յանդիսութեան եզրափակիչ խօսքը արտասանեց Առաջնորդ Մրբազանը: Ան յայտնեց, թէ այս հանդիսութիւնը գեղեցիկ արձագանգ մըն էր Վեհափառ Յայրապետի պատգամին եւ ուսի Յայ Կնոջ Տարուան նուիրուած ձեռնարկներուն եւ հանդիսութիւններուն եզրափակումը ըլլալու հանգամանք: Ան բարձր գնահատեց կազմակերպիչ յանձնախումբը, ինչպես նաեւ յայտագիրը մարմնաւորողները՝ հանդիսավարը, խօսք առնողներն ու գեղարուեստական բաժինին բոլոր մասնակիցները, վերջապես՝ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հոգաբարձութիւնն ու Տիկնանց Միութիւնը, ձեռնարկին հիւրընկալման համար:

Առաջնորդ Մրբազանը նշեց, որ 2010 տարին առիթ եղաւ որ հայ կինը յատուկ կարեւորութեամբ անդրադարսայ իր շնորհըներուն ու կոչումին, իր ազգային պարտականութիւններուն, վերարժեւոր ինքանիք ու իր առաքելութիւնը: Ան թելադրեց, որ մեր Եկեղեցիներն ու ազգային միաւորները աւելի եւս խորացնեն մեր քոյլերուն, մայրերուն ու դաստիարակներուն նկատմամբ իրենց յարգանքն ու աշխատանքի դաշտերուն անոնց մասնակցութիւնը: Առաջնորդ Մրբազանը յիշեցում կատարեց, որ Վեհափառ Յայրապետը իր պատգամին մեջ մանրամասնօրէն

անդրադարձած էր կնոջ առաքելութեան ու դերակատարութեան աստուածաշնչական, մեր Եկեղեցւոյ մօտեցումներուն, մեր պատմութեան Եւ մշակոյթի կերտման մէջ անոր անփոխարինելի բաժինին, ընդգծելով, որ Աստուածամայրն ու անոր առաքինութիւնները Եղած են ու պէտք է մասն հայ կնոջ կենցաղին հիմնական ուղեցոյցները: Այս մօտեցումով ալ, ան հանդիսականներուն ուշադրութեան յանձնեց գեղարուեստական յայտագիրով հրամցուած «Օրոր»ին այն տողերը, ուր մայրը Աստուածամօր խնդրանք կը Ներկայացնէ, որ իր մասնիկին քուն տայ. «Կ'աղօթենք, որ մեր Երիտասարդ մայրերը հաւատարիմ մնան այս աւանդութեան», ընդգծեց Առաջնորդ Սրբազնը, միաժամանակ վերահաստատելով այն իրողութիւնը, որ հայ կինն ու հայ մայրը ազգային ու բարոյական արժեքներու կրողներն ու մարմաւրողներն են, այս հանգրուանը անոնց համար կը հանդիսանայ ուխտի վերանորոգման առիթ, իսկ մեր Եկեղեցին ու մեր ազգը աւելի առողջ կերպով յառաջ կ'ընթանան, երբ առողջ են մեր ընտանեկան մթնոլորտն ու միջավայրը: Ան թելադրեց յարգանքով ու սիրով վերաբերիլ իգական սերի անդամներուն հետ, միաժամանակ մաղթելով, որ հայ կինն ու մայրը իրենց առաքելութիւնները իրականացնեն իմաստութեամբ ու իր շենքը հաստատուն ժայռի վրայ կառուցողին մօտեցումով:

Յիշեցնելով Աստուծոյ խօսքը թէ «Իմաստուն կինը իր տունը կը կառուցանէ, իսկ հիմարը զայս իր ձեռքերով կը փլցնէ», Առաջնորդ Սրբազնը ցաւով անդրադարձաւ մերօրեայ աշխարհին մէջ արձանագրուող որոշ նահանջներուն եւ ընկրկումներուն, որոնք յատուկ չեն աշխարհագրական այս կամ այն շրջանին, այլ կը տարածուին ամենուրեք: Ան շեշտեց, որ հայ մօր ուխտին վերանորոգումը երաշխիք է ազգի առողջութեան եւ փորձութիւններու յաղթահարման:

Հանդիսութիւնը վերջ գտաւ Առաջնորդ Սրբազնին «Պահպանիչ»ով, որմէ Ետք, Ներկաները, Երգչախումբին առաջնորդութեամբ, Երգեցին «Կիլիկիա»ն:

Այսուհետեւ, Ներկաները Եկեղեցւոյ սրահին մէջ վայելեցին Տիկնանց Միութեան ու Յոգաբարձութեան հիւրասիրութիւնը:

"YEAR OF THE ARMENIAN WOMAN" CELEBRATIONS CONCLUDE

Throughout the past year, heeding the call of H.H. Catholicos Aram I, events were held throughout Prelacy Churches in celebration of the "Year of the Armenian Woman". The year-long celebrations concluded with a community-wide event held at St. Mary's Church on the evening of Tuesday, November 16th, 2010. The event was held under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and was organized by the Prelacy Outreach Committee. In attendance were clergy, Central Executive member Mr. Khajag Dikijian, Executive Council members, representatives of sister organizations, and hundreds of community members.

At the beginning of the event, each woman was presented with a carnation by members of the organizing committee.

The evening began with the Lord's Prayer led by the Prelate and with the participation of clergy members, accompanied by the "Lousavorich" youth choir, led by Very Rev. Fr. Barthev Gulumian.

Master of Ceremonies Mrs. Tamar Seraydarian welcomed the guests, and reflected on the unique and invaluable role Armenian women have played in the history of the Armenian nation, and their current role in the 21st century, stressing that in today's world, women must work even harder to preserve the sanctity of our culture, our families, and community life.

The first part of the program consisted of remarks delivered by sister organizations on their thoughts on the role of Armenian women.

Mrs. Sona Madarian, speaking on behalf of the Armenian Relief Society, reflected on the contributions of Armenian women starting from the start of the 20th century with the establishment of the A.R.S., noting that the organization has expanded to 26 countries and 15,000 members, and faithfully continues its service and mission.

Speaking on behalf of Hamazkayin, Mrs. Dzovinar Melkonian reflected on the contributions of Armenian women in the formation and preservation of our culture, noting that during the days of the Genocide, Armenian mothers would teach their children the alphabet on the sands of the Euphrates river to ensure that our language and heritage was not lost. She also stressed that the role of Armenian women in the perpetuation of our heritage cannot be overstated and that the Armenian woman is ready to take on and overcome any and all challenges for the advancement and prosperity of our people and nation.

Mrs. Mariam Karapetian, Chair of the Prelacy Ladies Auxiliary, expressed appreciation that the Ladies Auxiliary is a participant in this celebration. She noted that during the past year the Ladies Auxiliary heeded the call of His Holiness and organized a number of events to celebrate the Armenian Woman. She also noted that the Armenian woman has had her unique place throughout history, from pre-Christian times until the present. She concluded by saying that this proclamation by His Holiness served not only to honor Armenian woman, but also to invite women to recognize their roles and renew their commitment to carrying out the mission that is entrusted to them.

The keynote speaker was Prelacy Executive Council Chair Mrs. Rima Boghossian.

Mrs. Boghossian first welcomed the guests and thanked the organizing committee for the opportunity. She also brought to attention the centuries-long service of Armenian women, noting that women from all walks of life, from queens, princesses, mothers, teachers, freedom-fighters, have been active participants in the building of our nation and have thus earned great respect and love. She stated that the foundation of our nation is the Armenian family, and the key player in the institution of family is the woman, alongside her husband. She exalted the unwavering devotion of the Armenian women towards their children and nation. She paid tribute to women who were pivotal

in the building of the Armenian nation, adding that though times change and with it the role of Armenian woman, the fundamental mission of Armenian women remains the same. She also remembered women writers, poets, and artists who have greatly enriched our culture, and organizations such as the ARS which is run primarily by women. In the last part of her presentation, Mrs. Boghossian spoke of the responsibilities, obligations, and unique role of Armenian mothers which is so critical to the raising of good children.

The program concluded with the Prelate's message, who noted that this concluding celebration is a wonderful manifestation of the proclamation of His Holiness. He commended the organizing committee and the program participants, and thanked the Pastors, Board of Trustees, and Ladies Auxiliary for hosting the event.

The Prelate stated that the proclamation of His Holiness offered the wonderful opportunity for us to collectively honor the Armenian woman, and continued to say that the involvement of women in our national life should increase. He spoke of how in his proclamation, His Holiness goes into great detail about the mission and role of Armenian women in the life of our Church, our history, and the cultivating of our culture. In addition, the Prelate wished that the Holy Mother of God and the virtues she represents be the fundamental guide of the lives and deeds of all Armenian women. Noting how Armenian women and mothers are the propagators of our religious and national values, His Eminence stated that this celebration should serve as an opportunity for all women to renew their commitment to their fulfilling their unique roles to ensure that we always have a strong church and a strong nation. In conclusion, he wished that Armenian women continue to be treated with utmost love and respect, and wished that Armenian women remain steadfast and unfaltering in their mission, especially in today's world which is filled with new challenges.

The evening also included a cultural program of songs and recitation. Students of Rose and Alex Pilibos School recited a poem dedicated to mothers, Soloist Elena Avanessian performed two songs dedicated to Armenian mothers and women, and the "Lousavorich" choir performed three songs, featuring a solo by Kenarik Nerkararyan. The choir was accompanied by Armine Derderian on the organ, and Armine Nerkararyan and Raquel Zabounian on the violin.

Following the Prelate's message and benediction, the crowd joined in the singing of the Cilician anthem, performed by the "Lousavorich" choir.

A reception followed at the church hall.